ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 05

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՆԻՍՏԻ

ք. Երևան **17.08.2021թ.**

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ ԱԱՏՄ) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 13.08.2021թ. N 06-Լ որոշման համաձայն որոշվել է Տեսչական մարմնի 13.08.2021թ. ժամը 15:00-ին կայացած արտահերթ նիստի օրակարգի հարցերը հավանության արժանացնել և հաստատել հեռակա քվեարկությամբ:

Էլեկտրոնային քվեարկությունը սկսվել է 2021 թվականի օգոստոսի 16-ին և ավարտվել 2021 թվականի օգոստոսի 17-ին:

Քվեարկության նյութերը սահմանված ժամկետում ներկայացվել են Խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին:

Հարցեր.

1. Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ ԱԱՏՄ) կառավարման խորհրդի 2020 թվականի նոյեմբերի 25-ի N 17-Լ որոշմամբ հաստատված՝ ԱԱՏՄ 2021 թվականի պահպանման ծախսերի նախահաշվում փոփոխությունների քննարկում և հավանության արժանացում:

2. ԱԱՏՄ հաստիքացուցակում փոփոխություններ կատարելու մասին առաջարկի քննարկում:

3. ԱԱՏՄ որակի ապահովման վարչության 2021 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների հաշվետվությունների ներկայացում և քննարկում:

4. ԱԱՏՄ 2021 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների գործունեության կատարողականների գնահատման քննարկում և հաստատում:

Քվեարկությանը մասնակցել են՝

Ն. Մկրտչյան	- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար (Խորհրդի նախագահ)
Լ. Նանուշյան	- ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ
Ա. Ասոյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար
Ա. Ավանեսյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Գ. Գրիգորյան	- «Երիտասարդ բժիշկների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության հիմնադիր
Հ. Պողոսյան	- Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության (ՀԱԳՄ) նախագահի գլխավոր խորհրդական
Շ. Դանիելյան	- Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (ԵՊԲՀ) աշխատակազմի ղեկավար
Վ. Պետրոսյան	- Հայաստանի ամերիկյան համալսարանի Թրփանճեան հանրային առողջապահության ֆակուլտետի դեկան, դոկտոր, պրոֆեսոր

Քվեարկությանը չեն մասնակցել՝

Ք. Գրիգորյան	- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Կ. Բրուտյան	

Քվեարկությունը համարվում է կայացած:

Քվեարկության արդյունքում.

1) Ն. Մկրտչյանը քվեարկեց կողմ,
2) Լ. Նանուշյանը քվեարկեց կողմ
3) Ա. Ասոյանը քվեարկեց կողմ,
4) Ա. Ավանեսյանը քվեարկեց կողմ,
5) Գ. Գրիգորյանը քվեարկեց կողմ,
6) Հ. Պողոսյանը քվեարկեց կողմ,
7) Շ. Դանիելյանը քվեարկեց կողմ
8) Վ. Պետրոսյանը քվեարկեց կողմ:

Քվեարկության արդյունքը՝ 8 կողմ, 0 դեմ:

Խորհրդի անդամներից 2-ը չեն քվեարկել:

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո Խորհուրդը որոշեց.

1. Հավանություն տալ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2020 թվականի նոյեմբերի 25-ի N 17-Լ որոշմամբ հաստատված՝ ԱԱՏՄ 2021 թվականի պահպանման ծախսերի նախահաշվում փոփոխություններ կատարելուն:

2. Հավանություն տալ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հաստիքացուցակում փոփոխություններ կատարելուն:

3. Հանձնարարել Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար Հ. Ավագյանին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2021 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների հաշվետվություններով ներկայացված առաջարկությունների կատարումը:

4. Հաստատել Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2021 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների գործունեության կատարողականների գնահատումները:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ն. ՄԿՐՏՉՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ